



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 մարտի 2018թ. թիվ 75-Ա

ՈՒՂԵԳՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.17 կետի «ա» ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2018 թվականի փետրվարի 21-ի «Բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերի ցանկում չընդգրկված անձանց պետության կողմից երաշխավորված անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու նպատակով բժշկական կազմակերպություններ ուղեգրող հանձնաժողովի ձևավորման և գործունեության մեթոդական ուղեցույցը հաստատելու մասին» թիվ 457-Ա հրամանը՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ եմ.

1. Լոռու մարզի պոլիկլինիկական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող առողջապահական ընկերություններում բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերի ցանկում չընդգրկված անձանց պետության կողմից երաշխավորված անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու նպատակով բժշկական կազմակերպություններ ուղեգրելու համար, ըստ տարածաշրջանների, ստեղծել մշտական գործող հանձնաժողովներ /այսուհետ՝ ուղեգրող հանձնաժողով/ համաձայն հավելվածի:

2. Հանձնաժողովներին՝

ա/ գործունեությունը կազմակերպել Լոռու մարզում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող պոլիկլինիկական կազմակերպություններում մշտական գործող ուղեգրող հանձնաժողովներին ՀՀ առողջապահության նախարարի կողմից յուրաքանչյուր տարվա համար հատկացված քվոտաների քանակի և առավելագույն գումարի սահմաններում:

բ/ սահմանված կարգով, եռամսյակային պարբերականությամբ, ներկայացնել հաշվետվություն ՀՀ առողջապահության նախարարություն և ՀՀ Լոռու մարզպետարան:

գ/ աշխատանքները կազմակերպել և որոշումները կայացնել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2018 թվականի փետրվարի 21-ի թիվ 457-Ա հրամանով սահմանված կարգով:

3. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Լոռու մարզպետի 2014 թվականի մարտի 11-ի թիվ 77-Ա որոշումը:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2018թ. մարտի 14
ք.Վանաձոր